

### ՎԱՋԳՈՒՇ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման  
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ

## «ՍՏՎԵՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԵՎ «ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հոդվածում իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա բացահայտված է իրավական կարգավորման մեխանիզմում որոշակի դերակատարում ունեցող այնպիսի նեգատիվ երևույթ, ինչպիսին այսպես կոչված՝ «ստվերային իրավունքն» է: «Ստվերայինացման» հիմնախնդրի հետազոտման վերաբերյալ անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում, քանզի դրա գոյությունը՝ տնտեսական ուղղվածությանը զուգընթաց, պայմանավորում է հատկապես ստվերային գործընթացների իրավական ապահովման մեխանիզմի գործողությունը: Սույն հոդվածում հիմնախնդրի առարկա է դարձել ոչ միայն «ստվերային» տնտեսության գոյությունը ապահովող ու երաշխավորող «ստվերային իրավունքը», այլև՝ «ստվերային իրավունքի» նյութական հիմքը կազմող «ստվերային տնտեսությունը», այլև հարկաբյուջետային համակարգում առկա մի շարք հիմնահարցեր:

**Հիմնարար քառեր-** ստվերային իրավունք, ստվերային տնտեսություն, ստվերային քաղաքականություն, լեգալացում, հարկաբյուջետային համակարգ, հարկաբյուջետային քաղաքականություն, բյուջե, վերահսկիչ պալատ, վերահսկողություն:

Չնայած վերջին տարիներին հանրապետության հարկաբյուջետային ոլորտում ձեռնարկված բարեփոխումներին՝ այսօր առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն և խոչընդոտ են հանդիսանում հարկատուի և պետության միջև թափանցիկ ու պարզ փոխհարաբերությունների կառուցման համար: Դրանց մասին են վկայում երկու հիմնական ցուցանիշ՝ ստվերայինության աստիճանը և հարկային ապառքների բարձր մակարդակը:

Արդի ժամանակաշրջանում հասարակական—քաղաքական զարգացումները, իրավակիրառ պրակտիկական վկայում են այն մասին, որ պոզիտիվ իրավունքի հետ զուգընթաց հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մեխանիզմում որոշակի դերակատարում ունի այնպիսի նեգատիվ երևույթ, ինչպիսին այսպես կոչված՝ «ստվերային իրավունքն» է: Այն, որ հետխորհրդային երկրներում տարբեր ոլորտներում իրականացվում են ստվերային գործընթացներ, կամ զարգացումներն ընթանում են ստվերային կառույցների միջոցով, գիտական շրջանակում հարուցել են տարաբնույթ մեկնաբանություններ ու դարձել բանավեճերի առարկա:

Հատկանշական է, որ և՛ հայրենական, և՛ օտարերկրյա հետազոտողներն իրենց մտահոգությունն են արտահայտել հատկապես «ստվերային իրա-

վունքի» կիրառման մասշտաբների և «ստվերային տնտեսության» ծավալների առնչությամբ: Հիմնավոր են այն տեսակետները, ըստ որոնց՝ նշված երևույթներին չդիմակայելը և պայքարելու համալիր միջոցներ չձեռնարկելը հղի են ծանր հետևանքներով և հանգեցնելու են տնտեսական և քաղաքական ճգնաժամային իրավիճակների առաջացմանը:

Մինչև վերջին ժամանակներս հասարակության «ստվերայինացում» հասկացությունը կարծես թե շրջանառվում էր հիմնականում պետության կարգավորումից կամ պետության հսկողությունից դուրս մնացած տնտեսական հարաբերությունների վերաբերյալ:

Նկատենք, որ բոլոր տնտեսական գործընթացները, այդ թվում՝ նեգատիվ երևույթները՝ թեկուզև բացասական տեսանկյունից, նույնպես բնորոշում են հասարակական կյանքի զարգացման մակարդակը:

Մասնագիտական գրականության մեջ երբեմն նշվում է «ստվերային» տնտեսության այսպես կոչված «ստվերային» բնույթի, ծագումնաբանության կամ խորհրդային ժամանակներից մնացած ժառանգության մասին: Կամ տնտեսության ազատականացումը դիտվում է որպես «ստվերայինացման» դեմ պայքարի միջոց, իսկ շուկայական տնտեսական հարաբերությունները՝ որպես «ստվերային

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունքի» իրագործումն արգելող միջոց, կամ տնտեսական գործունեության մեջ խորհրդային պետության անհարկի միջամտությունը համարվում է «սովետայնացմանը» նպաստող գործոն և այլն: Հարց է ծագում, իսկ ինչպե՞ս և ե՞րբ պետք է դրսևորվի պետության ուղղակի միջամտությունը նեգատիվ երևույթների դեմ պայքարում:

«Սովետայնացման» հիմնախնդրի հետազոտման վերաբերյալ անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում, քանզի դրա գոյությունը՝ տնտեսական ուղղվածությանը գույզնաբաց, պայմանավորում է հատկապես սովետային գործընթացների իրավական ապահովման մեխանիզմի գործողությունը:

Ժամանակակից փուլում և՛ իրավագիտության, և՛ տնտեսագիտության մեջ լուրջ բանավեճի առարկա է դարձել ոչ միայն «սովետային» տնտեսության գոյությունը ապահովող ու երաշխավորող «սովետային իրավունքը», այլև «սովետային իրավունքի» նյութական հիմքը կազմող «սովետային տնտեսությունը»: Որպես կանոն, հիշյալ հասկացություններն ունեն իրենց բազմաթիվ բնորոշումները, որոնք անհրաժեշտ է քննարկել հետևյալ հարցի առումով. ինչպիսի՞ն է «սովետային» տնտեսության և «սովետային» իրավունքի փոխկապվածությունը:

«Սովետային» տնտեսությունը և «սովետային» իրավունքը հաճախ գործածվում են նույնաբովանդակ այնպիսի հասկացությունների կամ բնութագրերի միջոցով, ինչպիսիք են՝ «ոչ պաշտոնական», «կեղծ», «ոչ իրավական», «սև շուկա», «թաքնված շուկա», «գաղտնի», «լատենտ», «ընդհատակյա», «անիրավական», «քրեականացված էկոնոմիկա» և այլ որակումներ:

Բնականաբար կարելի է ենթադրել, որ սովետայնացման «վիրուսը» բոլոր դեպքերում ավելի վաղ համակել է տնտեսության համակարգը՝ այնուհետև դրսևորվելով իրավական ոլորտում: «Սովետային իրավունք» հասկացությունը չի կարող համարվել պետականորեն ընդունելի, քանզի այն չի համապատասխանում հենց իրավունքի հիմնարար սկզբունքներին ու պահանջներին, սահմանված չէ պետության կողմից կամ պետական հարկադրանքի ուժով չի պաշտպանվում և այլն:

Սակայն իրավունքի «սովետայնացման» գործոնների բացահայտումը և դրանց շուտափույթ չեզոքացումը համարվում են ժամանակակից իրավական պետության հրատապ խնդիրներից, քանզի չնկատելը կամ այդ երևույթներին չդիմակայելն ինքնին հանգեցնում են տնտեսական, սոցիալական, քաղաքական և մյուս համակարգերում բացասա-

կան գործընթացների արմատավորմանը<sup>2</sup>:

Այդպիսիք են «սովետային» սեփականաշնորհումը, կապիտալի «սովետային» արտահանումը, «սովետային» զբաղվածությունը, արտահանման և ներմուծման ոլորտների «սովետային» գործառնությունները, «սովետային» եկամուտները, պետական բյուջեի միջոցների ոչ նպատակային օգտագործումը և այլն:

Տնտեսության նշված «սովետային» սեգմենտները տարածվում են և խթանում հասարակական-քաղաքական կյանքում առկա այնպիսի բացասական դրսևորումներ, ինչպիսիք են «սովետային» ընտրական տեխնոլոգիաների կիրառումը, «սովետային» արտադրությունը, «սովետային» իրավատեղծ գործունեության ծավալումը և այլն:

Օրինաչափորեն տնտեսության և իրավունքի «սովետայնացումը» պայմանավորում է գիտական հասկացությունների համակարգում արդեն շրջանառվող «սովետային քաղաքականության» ծագումը, որն իր հերթին խթանում է կոռուպցիոն երևույթները: Ընդ որում, եթե «սովետային» տնտեսությունում գոյացած նյութական արժեքներին են վերաբերում կոռուպցիային մասնակից պաշտոնատար անձանց նպատակադրված գործողությունները՝ շահ ստանալու ակնկալիքով, ապա նպատակների կենսագործման համար «սովետային իրավունքի» միջոցով ստացվում են «բարենպաստ պայմաններ»:

Ակնհայտ է, որ «սովետային» տնտեսությունը և «սովետային իրավունքը» կապակցված երևույթներ են, ունեն առաջացման և զարգացման ընդհանուր նախադրյալներ, դրսևորման միանման ձևեր, ինչպես նաև միմյանց հետ փոխներգործության ոլորտներ:

Հայտնի է, որ հիշյալ առումով առանձնահատուկ կարևորություն ունի «սովետային» տնտեսության դրսևորման սկզբունքորեն տարբեր հետևյալ ձևերի առկայությունը. առաջին՝ «ոչ պաշտոնական» տնտեսություն, որտեղ բացակայում են քրեորեն պատժելի արարքին բնորոշ հատկանիշները, երկրորդ՝ «քրեածին» տնտեսություն, որտեղ առկա են հանցակազմի հատկանիշներ<sup>3</sup>:

Հարկ է նկատել, որ իրականում տնտեսության դուրսբերումը սովետից կարելի է համարել բոլոր երկրների գերակա խնդիրներից մեկը, ոչ բոլոր դեպքերում է հաջողվում: Դա պայմանավորված է նրանով, թե ինչպիսի ուղղվածություն ունեն այդ միջոցառումները և դրանք ինչպիսի ընթացակարգով են իրականացվում: Այսպես, առանձին հետազոտողներ «սովետային» տնտեսության դեմ պայքարի վե-

րաբերյալ առաջարկում են, որ պետությունը ապահովի սեփականատիրոջ իրավունքների պատշաճ պաշտպանությունը կամ օրինականացնի ստվերում գտնվող ամբողջ գույքը և այլն<sup>4</sup>: Նշված բարդ հիմնախնդրի միանշանակ լուծման տարբերակ գոյություն չունի, բայց դա չի նշանակում, որ կարող են չառաջանալ իրարամերժ մեկնաբանություններ՝ կապված «ստվերային» տնտեսության կամ ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի օրինականացման հետ, և դա այն դեպքում, երբ ստվերում գործող սուբյեկտները ձգտում են ստեղծել վարչական և իրավական այլ գործառնություններով օժտված այսպես կոչված «սեփական ստվերային կառույցները»:

Իրավաբանական գրականության մեջ նշվում են տարբեր օրինակներ, որոնք վերաբերում են «ստվերային իրավունքի» ոլորտում տարաբովանդակ երևույթների դրսևորման ձևերի բազմազանությանը և ծավալներին: Պատահական չէ՝ գիտական հետազոտություններում արդեն շրջանառվում են այսպես կոչված «ստվերային» նորաստեղծ գործունեության իրականացում կամ «ստվերային» իրավակիրառման ապահովում, կամ «ստվերային վարչական իրավունք», կամ «կառավարչական կոռուպցիա», կամ «ստվերային հանցավոր իրավունք» և այլ հասկացություններ, ինչը կարևորում է դրանց կիրառման մեխանիզմների ժամանակին բացահայտման և կանխման անհրաժեշտությունը: Հիշյալ ասպեկտով պակաս կարևորություն չունի նաև պաշտոնական իրավունքի նկատմամբ «ստվերային իրավունքի» ներգործության շրջանակների և հատկապես այդ ներգործության ձևերի սահմանումը: Եթե վերլուծելու լինենք խնդրո առարկան, ապա կարելի է նկատել, որ նոր ժամանակներում «ստվերային իրավունքի» ազդեցության ձևերը ևս բազմաթիվ են: Անհրաժեշտ է նշել.

ա) նեգատիվ ներգործության մասին, երբ «ստվերային իրավունքը» խիստ բացասաբար է ներգործում պաշտոնական իրավունքի սկզբունքների, կառուցվածքի, ներքին տրամաբանության և այլնի վրա,

բ) պոզիտիվ ներգործության մասին, երբ «ստվերային իրավունքը» երբեմն նաև փոխարացնում և նպաստում է պաշտոնական իրավունքի նորմերի արդյունավետ իրացմանը,

գ) ակտիվ ներգործության մասին, երբ «ստվերային իրավունքը» նպաստում է գործող օրենսդրության մեջ համապատասխան ակտերի ընդունմանը, դ) չեզոք ներգործության մասին, երբ «ստվերային իրավունքը» սկզբնական շրջանում նվազ, բայց աս-

տիճանաբար բացասական ազդեցություն ունի պաշտոնական իրավական ակտերի նկատմամբ:

Այս հիմնախնդիրն անհրաժեշտ է քննարկել նաև իրավունքի «ստվերայինացումը» կանխարգելելու ուղիների բացահայտման տեսանկյունից: Այս իմաստով անհրաժեշտ է նկատել, որ «ստվերային իրավունքի» հիմնախնդիրն առավելապես առնչվում է գործող օրենսդրության ոչ պատշաճ արդյունավետության հետ, ինչը կարող է լինել այնպիսի երևույթների հետևանքը, ինչպիսին են իրավական ոչ ճիշտ ձևակերպումները, իրավակիրառական պրակտիկայում առկա բացթողումներն ու թերությունները, օրինագծերի ոչ պատշաճ փորձաքննության իրականացումը և այլն, որոնք համարվում են նաև ստվերային գործունեության ընդարձակման տեխնիկական պատճառներ: Հարկային օրենսդրության բարդությունը և դրանում առկա հակասությունները հարկատուներին թույլ են տալիս օրենսդրության պահանջների հնարավոր մեկնաբանությունների ճանապարհով խուսափել հարկերի վճարումից: Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախ պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք երկիմաստ կամ անորոշ են: Այդ դեպքում հարկատուն կարող է օրենսդրությամբ սահմանված դրույթը կիրառել մի ձևով, մինչդեռ դրա վերաբերյալ կարող է այլ լինել հարկային մարմինների մեկնաբանությունը: Որպես տեխնիկական պատճառ կարելի է նշել նաև հարկային օրենսդրության անկայունությունը, ինչը մեծ ազդեցություն է ունենում հարկատուի կողմից ընդունվող որոշումների վրա: Եթե օրենսդրությունը կամ այլ կերպ՝ պետության վարքագիծը փոխվում է առավել հաճախ, քան հարկատուի չհաշվառվող շրջանառության /հովանավոր անհատների/ կամ խմբերի վարքագիծը, ապա հարկատուն առավել հակված է համագործակցել վերջիններիս հետ:

Բարոյական պատճառները պայմանավորված են այն հանգամանքով, որ հանրապետության պետական իշխանության բարձրագույն ատյաններում տարածված են կոռուպցիայի դեպքերը, պետական միջոցները շատ հաճախ օգտագործվում են անձնական շահերի համար, ինչի պատճառով հարկատուները բարոյական պատասխանատվություն չեն զգում հարկերից խուսափելու համար: Մասնավորապես դեպքերում, երբ, ելնելով որոշակի ծախսերի կատարման անհրաժեշտությունից, պետությունը ձգտում է ավելացնել հարկային բեռը, հարկատուի կողմից այն ընդունվում է որպես հարկերից խուսափելու արդարացում: Հասարակական պահանջմունքները, որոնց բավարարման նպատակով հիմ-

նականում հարկերի միջոցով ձևավորվում է բյուջեի եկամտային մասը, հարկատուների կողմից չի ընդունվում որպես օբյեկտիվ իրականություն, հատկապես, եթե պետական ծախսերի հրապարակայնության անհարժեշտ մակարդակն ապահովված չէ<sup>5</sup> :

Միաժամանակ անհրաժեշտ է կարևորել այն տնտեսագիտական և իրավաբանական միջոցներն ու ձևերը, որոնք կոչված են նպաստելու գործընթացների «ստվերից» դուրսբերմանը: Բնականաբար անհրաժեշտ է այդ «լեգալացումն» իրականացնել բացառապես օրենքով ընձեռնված հնարավորությունների սահմաններում:

Այսպիսով, «ստվերային» տնտեսության և «ստվերային իրավունքի» փոխկապվածությունը ենթադրում է համակարգային մոտեցումների հիման վրա սահմանել նշված բացասական երևույթների դրսևորման արտաքին ու ներքին բնութագրիչների կամ ձևերի և դրանց փոխադարձ կապի սահմանումը:

Անհրաժեշտ է նկատել, որ «ստվերային» տնտեսությունը և «ստվերային» իրավունքը, ի տարբերություն հասարակության «ստվերայնացման» մյուս ձևերի, համարվում են առավել վտանգավոր ու բազմաթիվ դրսևորումներ ունեցող, ինչու չէ, նաև կայուն «խնտիտուտ», որոնք արմատավորվում են ցանկացած պետության տնտեսական, քաղաքական և իրավական համակարգերում, և որոնց դեմ անհրաժեշտ են պայքարի համալիր միջոցներ:

Հանրապետության հարկաբյուջետային համակարգում առկա մի շարք հիմնահարացեր ուղղակիորեն հետևանք են բյուջետային գործընթացը կարգավորող օրենսդրության անկատարության<sup>6</sup> :

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարկաբյուջետային համակարգում գլխավոր առանցքը և օղակը համարվում է բյուջե, ուստի որպես հիմնախնդիր պետք է անրադառնալ պետական բյուջեի ընդունման և կատարման նկատմամբ վերահսկողությանը: Գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններում ամրագրված է, որ պառլամենտը հաստատում է պետական բյուջեն՝ պետության եկամուտների և ծախսերի մասին կարևորագույն փաստաթուղթը: Պետական բյուջեի քննարկումը և ընդունումը ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական գործունեության կարևորագույն մասն է: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորվում է ֆինանսների ճիշտ հավաքագրմամբ և վերաբաշխմամբ: Բնական է, որ բյուջեի հաստատմանը և կատարմանը պետք է նախորդեն հարկային, բանկային, մաքսային հարաբերությունների օրենսդրական

կարգավորումը: Հետևաբար, պառլամենտն է, որ անմիջականորեն մշակում, հաստատում, փոփոխում է երկրի ֆինանսահարկաբյուջետային քաղաքականությունը: Սահմանադրության 76-րդ հոդվածում նշված է. «Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով»: Օրենսդիր մարմինը ընդունել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք (1997թ. Հունիսի 24)<sup>7</sup>: ՀՀ գործող օրենքների ժողովածու, որով սահմանվել և կարգավորվել են բյուջեի կազմման, հաստատման և դրա հետ կապված մյուս հարաբերությունները, սահմանվում է բյուջետային գործընթացը: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի համաձայն՝ բյուջեն քննարկվում և ընդունվում է մեկ ընթերցմամբ այն դեպքում, երբ, որպես կանոն, Ազգային ժողովում օրենքներն ընդունվում են երեք ընթերցմամբ: Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Հ.Հակոբյանը, երկրի հիմնական ֆինանսական փաստաթուղթը, սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող օրենքի ընդունման կարգը վերանայման կարիք ունի. այն պետք է անցնի առնվազն երկու ընթերցում: Դա նախ կօգնի բարձրացնել և՛ Կառավարության, և՛ պատգամավորների պատասխանատվությունը, հնարավորություն կտա ավելի երկար աշխատել այդ կարևոր փաստաթղթի վրա<sup>8</sup> :

Մեր կարծիքով, այս հարաբերությունները պետք է կարգավորվեն ոչ թե բյուջետային համակարգի մասին օրենքում և կանոնակարգում, այլ պետական բյուջեի հաստատման և դրանում փոփոխություններ կատարելու, պետական բյուջեի կատարման վերահսկողություն սահմանելու, հաշվետվության հաստատման լիազորությունները Սահմանադրությամբ որպես սահմանադրական նորմեր ամրագրվելու միջոցով:

Սահմանադրության պահանջներից ելնելով՝ Ազգային ժողովը բյուջեի կատարման կատմամբ իր վերահսկողությունն իրականացնում է Վերահսկիչ պալատի միջոցով, որի գլխավոր առաքելությունը բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկման ժամանակ սահմանված կարգով եզրակացություն ներկայացնելն է: Հետևաբար, առավել մեծանում է Վերահսկիչ պալատի դերը ստվերային տնտեսության բացահայտման, կոռուպցի-

ոն վտանգների նվազեցման առնչությամբ: Վերահսկիչ պալատին վերաբերող սահմանադրական դրույթների ուժեղացումն ունի ոչ միայն իրավական, այլև քաղաքական, տնտեսական և սոցիալական լուրջ նշանակություն:

Համաձայն Սահմանադրության 77-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ»: Տարեկան բյուջեի կատարման մասին կառավարությունը Ազգային ժողովին հաշվետվություն է ներկայացնում հաջորդ տարվա մայիսին: Ազգային ժողովում հաշվետվության հաստատման առնչությամբ եթե դրական որոշում չի ընդունվում, ապա Կառավարությունը դնում է իր վստահության հարցը: «Անվստահության» կամ «վստահության հայտման» այս գործառույթը կարևոր է պառլամենտի համար. դա նաև նպաստում է կառավարության առավել կազմակերպված գործունեության ծավալմանը: Ենթադրենք Ազգային ժողովն անվստահություն է հայտնում և չի հաստատում այդ կառավարության հաշվետվությունը: Այստեղից իրավաբանական որևէ հետևանք չի առաջանում, և որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվում<sup>9</sup>:

Ըստ էության, յուրաքանչյուր տարի, քննարկելով և հաստատելով երկրի բյուջեն, օրենսդիր մարմինը պետք է արտահայտի պետական եկամտունեքի և ծախսերի առթիվ առաջացող հասարակական հետաքրքրություններն ու շահերը և օրենսդրորեն սահմանի այն ֆինանսական դաշտի կառուցվածքը և չափերը, որում գործադիր իշխանությունը պարտավոր է իրականացնել դրանք: Նման սկզբունքի պահպանման նկատմամբ անհետևողականության դրսևորման պատճառով ներկայումս հանրապետության հարկաբյուջետային ոլորտում առկա է ոչ ցանկալի իրավիճակ: Ենթադրվում է, որ բյուջետային գործընթացում առաջնայինը համարվում է պետության հնարավոր եկամտունեքի սահմանումը, որոնցից ելնելով էլ պետք է պլանավորվեն պետական ծախսերի ուղղությունները և ծավալները:

Օրենսդիր մարմնի աշխատանքը պետական բյուջեի վրա, որպես կանոն, չի կրում սիստեմատիկ բնույթ և ժամանակային առումով խիստ սահմանափակ է: Բյուջեի նախագծի վրա աշխատանքների անարդյունավետությունը, մեր կարծիքով, պայմանավորված է նաև կառավարության կողմից ԱԺ ներկայացվող փաստաթղթերի դեռևս ոչ բավարար մակարդակով և քանակով, որի պատճառով, փաստորեն, օրենսդիր մարմինը դուրս է մնում բյուջեի ընդունումից հետո տեղի ունեցող գործընթացներից: Հանրապետության հարկաբյուջետային ոլորտում ներկայումս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը, նախ և առաջ, ենթադրում է օրենսդրական դաշտում փոփոխությունների և լրացումների իրականացում: Դրանք պետք է ուղղված լինեն կառավարության պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, պետական ֆինանսական միջոցների, արտաքին և ներքին փոխառվածությունների նպատակային օգտագործմանը, պետական բյուջեի իրատեսության և հիմնավորվածության, պատասխանատվության հասցեագրվածության ապահովման և այլ ուղղություններով, Ազգային ժողովի վերահսկողական գործառույթների իրատեսականության ապահովմանը, պետական բյուջեի չկատարման հստակ չափանիշների և բյուջեի չկատարման համար պատասխանատվության գործուն մեխանիզմների սահմանմանը և բյուջետային գործընթացի վրա քաղաքական իրավիճակի հնարավոր ազդեցության առավելագույն չեզոքացմանը<sup>10</sup>:

Հարկաբյուջետային համակարգի կատարելագործման, նրա արդյունավետության հետագա բարձրացման հարցերը միշտ էլ կարևոր տեղ են գրավել բոլոր երկրներում, ուստի հանրապետությունում իրականացվելիք հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է հիմնականում ուղղված լինի նվաճած հիմնախնդիրների լուծմանը, քանի որ առավելապես դրանից է կախված հարկաբյուջետային համակարգի արդյունավետությունը:

<sup>9</sup> Տե՛ս Սեյսյան Մ. Սովերային տնտեսության էությունը և դրսևորման առանձնահատկությունները, ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ համակարգի զարգացման միտումները, /հանրապետական գիտաժողովի նյութեր/, Երևան, Նահապետ, 2008թ:

<sup>10</sup> Տե՛ս Խաչատրյան Ա. Սովերային իրավունքի և սովերային տնտեսություն նկատառումներ հասկացությունների հարաբերակցության մասին. Գավառի պետական համալսարանի գիտական նյութերի ժողովածու, Երևան, 2006, թիվ 8:

<sup>3</sup> Տե՛ս Осипенко О. Мафия как экономически феномен, 1991.

<sup>4</sup> Տե՛ս Нколаева М.И., Шеваков А.Ю. Теневая экономика, 1991.

<sup>5</sup> Տե՛ս Կիրակոսյան Գ. Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Տնտեսագիտական գիտությունների թեկնածուականատենախոսություն, Երևան, 2000թ.:

<sup>6</sup> Տե՛ս Սաֆարյան Ա. Տնտեսության հարկաբյուջետային կազմավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2002թ.:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու 1995-1999 թթ գիրք Բ, Երևան, 2000թ., էջ 170:

<sup>8</sup> Տե՛ս Հակոբյան Հ. Պաշտամենտը և պաշտամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տիգրան Մեծ, 2007թ., էջ 708:

<sup>9</sup> Տե՛ս Հակոբյան Հ. Պաշտամենտական վերահսկողության դերը ժողովրդավարության հաստատման ճանապարհին, օրենք և իրականություն, 2005թ. N 2, փետրվար, էջ 6:

<sup>10</sup> Տե՛ս Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Սաֆարյան Ա. Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2004թ., էջ 158:

**Вазгush Костанян**

Аспирант кафедры юриспруденции академии государственного управления Республики Армения

#### РЕЗЮМЕ

##### *Основные задачи налогово-бюджетной системы Республики Армения в контексте “теневого права” и “теневого экономики”*

В статье на основании принципа превосходства права раскрывается имеющее определенную роль в механизме правового регулирования такое негативное явление, каким является так называемое «теневое право». Необходимо применять комплексный подход для исследования вопроса “затенения”, так как его существование совместно с экономической направленностью определяет деятельность механизма правового обеспечения, в особенности теневого процесса.

В настоящей статье предметом внимания стало не только “теневое право”, обеспечивающее и гарантирующее существование “теневого экономики”, а также “теневая экономика”, составляющая материальную основу “теневого права”, а также ряд основных проблем налогово-бюджетной системы.

**Ключевые слова:** теневое право, теневая экономика, теневая политика, легализация, налогово-бюджетная система, налогово-бюджетная политика, бюджет, контрольная палата, контроль.

**Vazgush Kostanyan**

Graduate student of chair of Jurisprudence of the Public Administration Academy of RA.

#### SUMMARY

##### *Concepts of the “Shadow Right” and “Shadow Economy” as the main objectives of fiscal system of the Republic of Armenia.*

A negative phenomenon, having certain role in mechanism of legal regulation, which is the so-called “shadow right”, is disclosed in the article on the basis of the principle of superiority of the right. It is necessary to adopt an integrated approach for studying the issue of “shadowing”, as its existence, together with the economic direction, determines specifically the activities of the mechanism of legal support of shadow process.

The subject of the issue in this paper is not only “shadow right” which ensures and guarantees the existence of the “shadow economy” but also the “shadow economy”, which is the material basis of the “shadow right”, as well as a number of basic problems of fiscal system.

**Keywords:** shadow right, shadow economy, shadow politics, legalization, fiscal system, fiscal policy, budget, Control Chamber, control.